

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2026Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	7
3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ	9
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	12
5. ԱՄՓՈՓՈՒՄ	15

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՍՀ, ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՏԱ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԳՄՍ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՇՄ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԿԵ, ՏԿԵՆ	ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2026թ. առաջին եռամսյակում ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումները ձևավորվել են աշխարհաքաղաքական անորոշության և փոփոխվող առևտրային հոսքերի պայմաններում՝ պայմանավորված Մերձավոր Արևելքի ռազմական լարվածությամբ: ԱՄՆ-ի և Չինաստանի տնտեսություններում պահպանվել են աճի համեմատաբար կայուն տեմպեր (համապատասխանաբար՝ 2.7% և 5.0%), եվրագոտում արձանագրվել է աճի տեմպի դանդաղում մինչև 0.8%, իսկ ՌԴ-ում վերջին երեք տարիների ընթացքում առաջին անգամ՝ տնտեսական անկում՝ 0.3%, ինչը հիմնականում պայմանավորված է եղել հունվարին և փետրվարին մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտների անկմամբ, ինչպես նաև ավելի թույլ սպառողական պահանջարկով:

2026-ի տարեսկզբից ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպերը վերոհիշյալ և ներքին պատճառներով աստիճանաբար դանդաղել են, սակայն մնացել են համեմատաբար բարձր մակարդակում: 2026թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական ակտիվությունն աճել է 7.1%-ով:

Արդյունաբերության ոլորտում դեռևս նախորդ տարվա հուլիսից արձանագրվող աճի միտումները շարունակվել են նաև ընթացիկ տարում: 2026թ. առաջին եռամսյակում արդյունաբերական արտադրանքի թողարկումն աճել է 13.4%-ով: Աճը հիմնականում ապահովվել է շնորհիվ մշակող արդյունաբերության և «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ենթաճյուղի: Արդյունաբերության աճին նպաստել է նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղը, որի աճը հիմնականում ապահովվել է շնորհիվ էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը նվազել է 3.2%-ով՝ պայմանավորված բուսաբուծության և անասնաբուծության նվազումներով: Դրանց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.0 և 1.1 տոկոսային կետ: Ձկնորսության և անտառային տնտեսության ենթաճյուղերում արձանագրվել է աճ: Դրանք համապատասխանաբար 0.7 և 0.2 տոկոսային կետով հակազդել են գյուղատնտեսության համախառն արտադրանքի նվազմանը:

Շինարարության ոլորտում գրանցված 22.0% աճը հիմնականում պայմանավորված է կազմակերպությունների և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով: Դրանց նպաստումները

կազմել են համապատասխանաբար 18.2 և 7.0 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումը՝ պայմանավորված միջազգային վարկերով ֆինանսավորվող ծրագրերի կրճատմամբ, էականորեն հակազդել է ընդհանուր աճին: Կազմակերպությունների և բնակչության միջոցներով ֆինանսավորվող շինարարության աճը վկայում է ներքին միջոցների հաշվին մասնավոր ներդրումների ակտիվացման մասին, ինչը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության ծավալների աճով:

Ծառայություններն աճել են 7.4%-ով՝ հիմնականում «տրանսպորտի» (մասնավորապես՝ ցամաքային), և «տեղեկատվության և կապի» (հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների) ենթաճյուղերի աճերի հաշվին:

Առևտրի ոլորտում աճի տեմպը շարունակել է կտրուկ նվազել. 2026թ. առաջին եռամսյակում այն հասել է 2.1%-ի, որը շուրջ եռակի ավելի ցածր է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6%-ը: Ի դեպ, երկու տարի առաջ՝ 2024թ. առաջին եռամսյակում, առևտրի աճը 26.5% էր: Այսինքն՝ երկու տարի առաջվա համեմատ առևտրի ոլորտի աճի տեմպը դանդաղել է 12.6 անգամ: Առևտրի աճը հիմնականում պայմանավորված է եղել մանրածախ առևտրի աճով, որի նպաստումն առևտրի աճին կազմել է 2.6 տոկոսային կետ: Իսկ մեծածախ առևտուրը նվազել է՝ 0.6 տոկոսային կետով հակազդելով ընդհանուր առևտրի աճին:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2026թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 4,705 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 4.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում դոլարային արտահայտությամբ աճել են և՛ արտահանումը, և՛ ներմուծումը. արտահանումն աճել է 4.5%-ով՝ կազմելով 1,760 մլն ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 4.6%-ով՝ կազմելով 2945 մլն ԱՄՆ դոլար: Ի դեպ, հունվար-մարտ ամիսների արտահանման աճը բացառապես պայմանավորված է փետրվարին արձանագրված կտրուկ աճով, մինչդեռ հունվար և մարտ ամիսներին արտահանման ծավալները նվազել են հիմնականում վերաարտահանման կրճատման հետևանքով: Ապրանքների արտահանման աճը հիմնականում պայմանավորված է հանքահումքային ապրանքատեսակների արտահանման աճով: Ապրանքների արտահանման իրական ծավալներն աճել են 3.3%-ով: **Մինչդեռ ներմուծման իրական ծավալները նվազել են 13.4%-ով: Միաժամանակ, 15.5%-ով աճել են ներմուծվող ապրանքների գները: Ներմուծման ծավալների առաջանցիկ աճի պատճառով արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2026թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ վատթարացել է 4.7%-ով և կազմել 1,185 մլն ԱՄՆ դոլար:**

2026թ. առաջին եռամսյակում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.9%-ով՝ կազմելով 307,574 դրամ: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.9%-ով՝ կազմելով 234,785 դրամ, իսկ ոչ պետականում՝ 1.7%-ով՝ կազմելով 335,801 դրամ: **Նկատի ունենալով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաշվետու ժամանակահատվածի 4.2% գնաճը՝ ստացվում է, որ իրական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.6%-ով:**

2026թ. հունվար-մարտ ամիսներին դեպի ՀՀ ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է շուրջ 155 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 17.9%-ով:

2026թ. առաջին եռամսյակի ընթացքում գնաճն արագացել է և գերազանցել ԿԲ թիրախային ցուցանիշը: Այդ պայմաններում ԿԲ-ն դադարել է մեղմացնել դրամավարկային պայմանները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպանելով 6.5% մակարդակում: Գնաճի արագացումը զուգակցվել է բնականոն գնաճի (որի կազմում չեն ներառվում սեզոնային պարենային ապրանքներն ու ծառայությունները) արագացմամբ: 12-ամսյա գնաճը մարտին կազմել է 4.5%, միջին գնաճը՝ 4.2%, իսկ 12-ամսյա բնականոն գնաճը՝ 4.7%:

Ընդհանուր առմամբ, 2026թ. առաջին եռամսյակի մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած տնտեսությունում պահպանվող համեմատաբար բարձր ակտիվությանը, տնտեսական աճի հիմքերը բավականաչափ կայուն ու հավասարակշռված չեն: **Մասնավորապես՝ առևտրի աճի տեմպերի կտրուկ դանդաղումը, արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի խորացումը, գյուղատնտեսության անկումը և իրական աշխատավարձի նվազումը հետևանք են բազմաթիվ կառուցվածքային խնդիրների և հաստատում են, որ տնտեսությունը շարունակում է մնալ բավական խոցելի:** Այս առումով, ակնհայտ է, որ առանց արտադրության, արտահանման և ներդրումային ակտիվության խթանմանն ուղղված արդյունավետ և երկարաժամկետ տնտեսական քաղաքականության առկա բացասական միտումները կարող են խորանալ՝ մեծացնելով բյուջետային և մակրոտնտեսական ռիսկերը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

«ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի հիման վրա հաստատված եռամսյակային համամասնությունների համաձայն՝ առաջին եռամսյակի համար պլանավորված էր, որ պետական բյուջեի եկամուտները կկազմեն 631.7 մլրդ դրամ, ծախսերը՝ 837.6 մլրդ դրամ, պակասուրդը՝ 205.9 մլրդ դրամ: Հետագայում ճշտված պլանով դրանք որոշակիորեն վերանայվել են և կազմել համապատասխանաբար 635.7 մլրդ դրամ, 857.5 մլրդ դրամ և 221.8 մլրդ դրամ:

2026թ. առաջին եռամսյակում պետական բյուջեի ընդհանուր եկամուտների գծով փաստացի ապահովվել են 668.5 մլրդ դրամի մուտքեր՝ եռամսյակային ճշտված պլանի ցուցանիշից 5.2%-ով ավելի: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է «հարկային եկամուտներ և պետական տուրքերի» ու «այլ եկամուտների» կատարողականով:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2025		2026		
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	597.4	631.7	635.7	668.5	105.2
<i>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</i>	566.5	610.2	613.6	643.4	104.9
<i>Պաշտոնական դրամաշնորհներ</i>	1.5	2.7	2.7	1.0	36.0
<i>Այլ եկամուտներ</i>	29.4	18.8	19.5	24.1	123.7

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 643.4 մլրդ դրամ: Դրանք կազմում են պետական բյուջեի փաստացի եկամուտների 96.2%-ը և ճշտված պլանի ցուցանիշին գերազանցում են 4.9%-ով:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել է ավելացված արժեքի հարկը՝ 34.1%, որի ծավալը կազմել է 219.1 մլրդ դրամ: Երկրորդ խոշոր եկամտատեսակը եկամտային հարկն է՝ 192.3 մլրդ դրամ ծավալով և 29.9% տեսակարար կշռով: Զգալի տեսակարար կշիռ

են ունեցել նաև շահութահարկը, ակցիզային հարկը և սոցիալական վճարը, համապատասխանաբար՝ 8.4%, 5.2% և 5.0%:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. առաջին եռամսյակի փաստացի (մլրդ. դրամ)	2026թ. առաջին եռամսյակի փաստացի (մլրդ. դրամ)	2026թ. առաջին եռամսյակը 2025թ. առաջին եռամսյակի նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	566.5	643.4	113.6
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	549.3	616.1	112.2
ԱԱՀ	208.8	219.1	104.9
Ակցիզային հարկ	28.5	33.5	117.5
Շահութահարկ	61.8	53.9	87.2
Մաքսատուրք	18.1	16.3	90.5
Եկամտային հարկ	169.2	192.3	113.7
Շրջանառության հարկ	18.3	23.2	126.4
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	28.6	32.2	112.7
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-1.7	20.6	-1,234.6
Այլ հարկեր	17.6	24.9	141.4
2. Պետական տուրք	17.2	27.3	158.6

2026 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե մուտքագրվել են 27.3 մլրդ. դրամ պետական տուրքեր՝ եռամսյակային ծրագրային ցուցանիշից 59.6%-ով (10.2 մլրդ. դրամով) և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի մուտքերից 58.6%-ով (10.1 մլրդ. դրամով) ավելի:

Պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվել է ընդամենը 961.5 մլն դրամ՝ պլանավորվածից գրեթե եռակի պակաս: Թերակատարումը պայմանավորված է նպատակային ծրագրերի ցածր կատարողականով: Դրանցից 5-ի շրջանակներում նախատեսված 1.1 մլրդ. դրամ դրամաշնորհներն ընդհանրապես չեն ստացվել, մյուս ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները միայն մասամբ՝ 60.9%-ով են ստացվել: Հարկ է նշել, որ պաշտոնական դրամաշնորհների թերակատարման առումով գործող կառավարությունը շարունակում է տարիներ ի վեր ձևավորված տխուր ավանդույթը. դրանք գործող կառավարության օրոք թերակատարվել են, ըստ էության, բոլոր հաշվետու ժամանակահատվածներում, քանի որ դոնորների հետ նախապես համաձայնեցված նախապայմանների կատարման հարցում թերացումների շրջանակում շարունակաբար ի հայտ են գալիս էական խնդիրներ ու թերություններ:

Առաջին եռամսյակում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշից 34.1%-ով կամ 496.7 մլն դրամով պակաս են:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 24.1 մլրդ դրամ՝ ծրագրված ցուցանիշից 23.7%-ով ավելի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 18.0%-ով պակաս: Բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններով, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներով, ինչպես նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներով: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով մուտքերը կազմել են 2.0 մլրդ դրամ, այն դեպքում, երբ ճշտված ծրագրով նախատեսված է ընդամենը 18 մլն դրամ: Աճը հիմնականում պայմանավորված է «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վճարված 2 մլրդ դրամ շահաբաժիններով: Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ՝ 4.7 անգամ (850 մլն դրամով) գերազանցելով առաջին եռամսյակի ծրագրված ցուցանիշը: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ՀՀ ՊՆ զինծառայողի ուսումնառության ընթացքում պետության կատարած ծախսերի փոխհատուցումից մուտքերով, որոնք կազմել են 527.4 մլն դրամ՝ 2.7 անգամ (330.3 մլն դրամով) գերազանցելով ծրագրված և 2.4 անգամ (303.9 մլն դրամով)՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշները: Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները ճշտված պլանի ցուցանիշին գերազանցել են 29.8%-ով՝ կազմելով 7.3 մլրդ դրամ: **Այս հանգամանքը բավական մտահոգիչ է. կարևորագույն ծրագրերի գծով ծախսերի թերակատարման հետևանքով բյուջեում զգալի ազատ միջոցների կուտակումը և այդ միջոցների տեղաբաշխումը ֆինանսավարկային հաստատություններում, փաստացի, վկայում են ծախսային քաղաքականության իրականացման անարդյունավետության մասին:**

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 603.3 մլրդ դրամ՝ եռամսյակային ճշտված ծրագրով նախատեսվածից 29.6%-ով կամ 254.2 մլրդ դրամով պակաս: Թերակատարված 254.2 մլրդ դրամ գումարի 46%-ը՝ 116.8 մլրդ դրամը, **ընթացիկ ծախսերի**, իսկ 54%-ը կամ 137.4 մլրդ դրամը՝ **ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների** գծով է:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 99.3%-ը կամ 599.0 մլրդ դրամը: Դրանց գծով եռամսյակային ծրագիրը թերակատարվել է 28.7%-ով: **Բյուջեի ծախսերի ընդամենը 0.7%-ը կամ 4.3 մլրդ դրամն է ֆինանսավորվել արտաքին աղբյուրների հաշվին, ինչը եռամսյակային ճշտված պլանի ցուցանիշից քառակի ցածր է, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի մեծության համեմատ նվազել է շուրջ 2.3 անգամ:**

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ

ԾԱԽՍԵՐ	2025թ. առաջին եռամսյակի փաստացի	2026թ. առաջին եռամսյակի պլան	2026թ. առաջին եռամսյակի ճշտված պլան	2026թ. առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (%)
Ընդամենը ծախսեր	576.2	837.6	857.5	603.3	70.4
<i>Ընթացիկ ծախսեր</i>	<i>501.4</i>	<i>666.2</i>	<i>677.7</i>	<i>560.9</i>	<i>82.8</i>
<i>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</i>	<i>74.7</i>	<i>171.4</i>	<i>179.8</i>	<i>42.4</i>	<i>23.6</i>

Պետական բյուջեի **ընթացիկ ծախսերը 2026թ. առաջին եռամսյակում կազմել են 560.9 մլրդ դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 17.2%-ով:** Ճշտված պլանից շեղումը հիմնականում պայմանավորված է սոցիալական նպաստների ու կենսաթոշակների, այլ ծախսերի, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև դրամաշնորհների ծախսերի կատարողականներով: Սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերի 87.7% կատարողականը հիմնականում պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների հաշիվներին կատարված հատկացումների 83.7% և Ղարաբաղից տեղահանվածներին օժանդակելու համար աջակցության 40.9% կատարողականներով, որոնք, ըստ 2026թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հրապարակված հաշվետվության՝ հիմնականում պայմանավորված են համապատասխանաբար փաստացի պահանջով և կանխատեսվածի համեմատ շահառուների պակաս թվով: Իսկ այլ

ծախսերի 60.8% կատարողականը հիմնականում պայմանավորված է «Ռազմական կարիքների բավարարում» միջոցառման 84% կատարողականով:

2026-ին ևս առաջին եռամսյակում ընթացիկ ծախսերի ոչ մի բաղադրիչի գծով ճշտված պլանը չի կատարվել: Ճշտված պլանի համեմատ առավել ցածր կատարողական է արձանագրվել «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» և «այլ ծախսեր» հոդվածների գծով՝ համապատասխանաբար 49.6% և 60.8%:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի 49.6% կատարողականը մասամբ պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի շրջանակներում ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի 26.2% կատարողականով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2025		2026		
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	576.2	837.6	857.5	603.3	70.4
Ընթացիկ ծախսեր	501.4	666.2	677.7	560.9	82.8
Աշխատանքի վարձատրություն	50.0	59.5	63.9	54.5	85.3
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	14.7	29.0	30.6	15.2	49.6
Տոկոսավճարներ	39.2	50.2	50.2	41.8	83.3
Սուբսիդիաներ	39.9	50.0	50.0	48.8	97.5
Դրամաշնորհներ	63.5	78.3	73.4	59.8	81.5
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	250.3	328.8	341.0	299.1	87.7
Այլ ծախսեր	43.9	70.4	68.6	41.8	60.8
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	74.7	171.4	179.8	42.4	23.6
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	75.2	173.9	182.3	42.6	23.3
Շենքեր և շինություններ	69.5	164.3	169.0	39.8	23.6
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում,	4.9	6.6	9.5	2.4	25.8

պահպանում և հիմնանորոգում					
Այլ հիմնական միջոցներ	0.8	3.1	3.8	0.3	7.5
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(0.5)	(2.5)	(2.5)	(0.1)	5.4

2026թ. առաջին եռամսյակում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) կազմել են 42.6 մլրդ դրամ: Դրանք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 43.4%-ով՝ պայմանավորված «ՀՀ պաշտպանության ապահովում» և «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրերի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի համապատասխանաբար 63.8% և 51.2% նվազմամբ:

Կապիտալ ծախսերը եռամսյակային ճշտված պլանի նկատմամբ ավելի քան քառակի՝ 76.7%-ով, թերակատարվել են: Ի դեպ, կապիտալ ծախսերը ևս, ինչպես և ընթացիկ ծախսերը, թերակատարվել են բոլոր բաղադրիչների գծով: Ընդ որում, ամենամեծ թերակատարումը ՊՆ «ՀՀ պաշտպանության ապահովում» և ԿԳՄՍ նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրերի կապիտալ ծախսերի գծով է: «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրով կապիտալ ծախսերի եռամսյակային ճշտված պլանի 92.8 մլրդ դրամ ցուցանիշի դիմաց փաստացի կատարվել են ավելի քան հինգ անգամ պակաս՝ 18.4 մլրդ դրամ (ծրագրված ցուցանիշի 19.9%-ը) կապիտալ ծախսեր: Հիշեցնենք, որ 2025-ի նույն ժամանակահատվածում էլ ծրագրված 170.2 մլրդ դրամի դիմաց կատարվել էին ընդամենը 50.9 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի ընդամենը 29.9%-ի չափ ծախսեր:

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

ՀՀ կառավարության որոշմամբ 2026թ. պետական բյուջեի շրջանակներում առաջին եռամսյակում նախատեսվել էր 164, իսկ ճշտված ծրագրով՝ 166 բյուջետային ծրագրերի իրականացում 47 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի միջոցներ են օգտագործվել 157-ի գծով, ընդ որում՝ ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության, վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում առաջին եռամսյակում նախատեսված 772 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 5

միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել է 609-ը կամ 78.9%-ը:

2026 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ծախսերի 254.2 մլրդ դրամ թերակատարման զգալի մասը ՀՀ պաշտպանության, ԿԳՄՍ ու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով է՝ համապատասխանաբար 86.8 մլրդ դրամ, 36.3 մլրդ դրամ և 35.3 մլրդ դրամ:

Տոկոսային արտահայտությամբ առավել մեծ թերակատարումներ արձանագրվել են Պաշտպանության, ՏԿԵ և ԿԳՄՍ նախարարությունների պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով՝ համապատասխանաբար 60.1%, 37.3% և 34.4%:

Առավել ցածր կատարողական գրանցած որոշ ծրագրերի վերաբերյալ տվյալներ ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 5. 2026թ. առաջին եռամսյակում իրականացված որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ

N	Ծրագիր	Պատասխանատու	2026թ. առաջին եռամսյակի ճշտված պլան	2026թ. առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
1.	Քաղաքային զարգացում	ՏԿԵ նախարարություն (իրականացվել է 17 ծրագիր, որոնցից 8-ի կատարողականն անբավարար* է)	5,745.4	231.3	4.0
2.	Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում		1,929.6	156.0	8.1
3.	Ճանապարհային ցանցի բարելավում		15,302.5	4,693.5	30.7
4.	Ոռոգման համակարգի առողջացում		2,072.9	850.6	41.0
5.	Անասնաբուժական ծառայություններ	Էկոնոմիկայի նախարարություն (իրականացվել է 10 ծրագիր, որոնցից 3-ի կատարողականն անբավարար* է)	1,289.7	2.6	0.2
6.	Ջրուղիների զարգացման ծրագիր		329.8	27.4	8.3
7.	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում		543.0	172.8	31.8
8.	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	ԿԳՄՍ նախարարություն (իրականացվել է 24 ծրագիր, որոնցից 6-ի կատարողականն անբավարար* է)	42,268.3	15,355.2	36.3
9.	ՀՀ պաշտպանության ապահովում	Պաշտպանության նախարարություն	144,095.7	57,309.7	39.8

	(իրականացվել է 5 ծրագիր, որոնցից 1-ի կատարողականն անբավարար* է)			
10. Զբաղվածության ծրագիր	ԱԱՀ նախարարություն (իրականացվել է 17 ծրագիր, որոնցից 5-ի կատարողականն անբավարար* է)	2,159.5	725.6	33.6
11. Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման ուն վերացման նպատակով՝ ստանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն		13,750.0	5,624.6	40.9
12. Անտրառների կառավարում	ՇՄ նախարարություն (իրականացվել է 5 ծրագիր, որոնցից 2-ի կատարողականն անբավարար* է)	2,134.2	731.0	34.3
13. Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	ԲՏԱ նախարարություն (իրականացվել է 5 ծրագիր, որոնցից 3-ի կատարողականն անբավարար* է)	850.2	0.0	0.0
14. Թվային փոխակերպման գործընթացի իրականացում		3,020.9	214.5	7.1
15. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր		2,710.6	862.3	31.8

* Ճշգրտված պլանի նկատմամբ կատարողականը 50%-ից ցածր է:

Աղյուսակում ներկայացված ծրագրերից շատերի գծով թերակատարումները կրում են քրոնիկ բնույթ՝ դրանց գծով կատարողականն արդեն մի քանի հաշվետու ժամանակահատված շարունակ չափազանց ցածր է: Մինչդեռ դրանց մեծ մասի ռազմավարական կարևորությունն անհերքելի է:

Այսպես, բացի նրանից, որ ԲՏԱ նախարարության պատասխանատվության ներքո իրականացվող «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման ծրագրի» շրջանակներում 2026թ. առաջին եռամսյակում ընդհանրապես ծախս չի կատարվել, դրա կատարողականը նախորդ հաշվետու ժամանակահատվածներում ևս չափազանց ցածր է եղել (որոշ հաշվետու ժամանակահատվածներում՝ պարզապես 0%): Խիստ ցածր է նաև նույն նախարարության «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագրի կատարողականը՝ 7.1%:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Զբոսաշրջության զարգացման ծրագրի» գծով կատարողականն ընդամենը 8.3% է, չնայած որ գործող կառավարությունը մշտապես շեշտում է զբոսաշրջության ոլորտի ռազմավարական կարևորությունը:

ՏԿԵՆ «Քաղաքային զարգացում» ծրագրի գծով ապահովվել է ընդամենը 4.0% կատարողական:

ԿԳՄՍ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի ցածր կատարողականը՝ 36.3%, գործող կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրի «300 դպրոց, 500 մանկապարտեզ» թիրախի արդյունավետության ցայտուն գնահատականն է:

Ընդհանուր առմամբ, 2026թ. առաջին եռամսյակում պետական բյուջեի ծախսերի կատարողականը ցույց է տալիս, որ ծախսային քաղաքականության իրականացման ոլորտում շարունակում են պահպանվել լուրջ համակարգային խնդիրներ: Կապիտալ ծախսերի չափազանց ցածր կատարողականը, արտաքին աղբյուրներով ֆինանսավորվող ծրագրերի փաստացի ձախողումը, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի գծով արձանագրված քրոնիկ թերակատարումները վկայում են պետական կառավարման արդյունավետության անբավարար մակարդակի մասին: Հատկապես մտահոգիչ է, որ թերակատարումներ են արձանագրվել պաշտպանության, կրթության, ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիաների և այլ կարևոր ոլորտներում իրականացվող ծրագրերի գծով: Բյուջետային ծախսերի թերակատարումը, բացի նրանից, որ սահմանափակում է տնտեսական ակտիվության և ենթակառուցվածքների զարգացման վրա պետական ծրագրերի ազդեցությունը, նաև լուրջ իմիջային հարված է պետական քաղաքականության նկատմամբ վստահությանը:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԲԸ

ՀՀ պետական բյուջեն 2026թ. առաջին եռամսյակում կատարվել է 65.2 մլրդ դրամ հավելուրդով՝ ծրագրված 221.8 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 21.2 մլրդ դրամ հավելուրդի դիմաց: Բյուջեի հավելուրդի ձևավորման հիմնական պատճառը ծախսերի ցածր կատարողականն է: Հավելուրդը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների աճի: Ցածր ցուցանիշ է արձանագրվել արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով, որոնք կազմել են 2 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 14.1%-ը: Արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով ցածր կատարողականը վկայում է նպատակային (կապիտալ) ծրագրերի լուրջ թերակատարման մասին:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2025		2026		
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	-21.2	205.2	221.8	-65.2	-29.4
Պակասուրդի ֆինանսավորումը՝					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	-155.6	163.7	236.9	-42.5	-17.9
1. Փոխառու զուտ միջոցներ	92.2	94.4	94.4	90.1	95.4
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-247.8	69.3	142.5	-132.6	-93.0
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	134.4	42.2	-15.2	-22.7	149.7
1. Փոխառու զուտ միջոցներ	130.4	43.2	-14.2	-25.6	181.1
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	4.0	-1.0	-1.0	2.9	-284.6

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն ապահովվել է գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտքերի հաշվին, որոնք կազմել են 90.1 մլրդ դրամ և առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշն ապահովել են 95.4%-ով:

2026թ. առաջին եռամսյակում ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է -132.6 մլրդ դրամ՝ ծրագրված 142.5 մլրդ դրամի դիմաց, հիմնականում պայմանավորված ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսված 144.5 մլրդ դրամ օգտագործման փոխարեն 131.1 դրամ աճով:

Փոխառու զուտ միջոցները բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրներում կազմել են -25.6 մլրդ դրամ:

Արտաքին ֆինանսական զուտ ակտիվների հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 2.9 մլրդ դրամ՝ նախատեսված -1 մլրդ դրամի դիմաց:

2026թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի հավելուրդի աճի (ծախսերի նվազման) պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական

պահանջարկի վրա ունեցել է թույլ զսպող ազդեցություն, չնայած բյուջեով պլանավորված է հիմնականում չեզոք ազդեցություն:

Համաձայն 2026թ. հունվարի 8-ին ուժի մեջ մտած «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության՝ պետական պարտքն իրենից ներկայացնում է կառավարության պարտքի և համայնքների պարտքի հանրագումարը: 2026թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,315 մլրդ դրամ կամ 14,077 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 5,312 մլրդ դրամ կամ 14,069 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ համայնքների պարտքը՝ 3.1 մլրդ դրամ կամ 8.2 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ պետական պարտքում 2,522 մլրդ դրամը (6,681 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին, 2,792 մլրդ դրամը (7,397 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

2026թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը 2025-ի տարեվերջի համեմատ դրամային արտահայտությամբ աճել է 11.5 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 171.1 մլն ԱՄՆ դոլարով: Աճը պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի աճով՝ համապատասխանաբար 0.2%-ով և 1.2%-ով: ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը պարտքի ծավալում կազմել է 99.9%, իսկ ՀՀ համայնքների պարտքի կշիռը՝ 0.1%:

2026թ. մարտի 31-ի դրությամբ 2025-ի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պետական պարտքն աճել է 133.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 2%-ով: Մասնավորապես՝ կառավարության արտաքին պարտքն աճել է 133.3 մլն ԱՄՆ դոլարով (2%-ով), իսկ համայնքների արտաքին պարտքը՝ նվազել 0.2 մլն ԱՄՆ դոլարով (2.4%-ով): Արտաքին պարտքի տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում փոքր-ինչ աճել է՝ 47.1%-ից հասնելով 47.5%-ի:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը թեև նախորդ տարվա համեմատ շարունակել է նվազել, այնուամենայնիվ, մարտին փետրվարի համեմատ գրանցվել է որոշակի աճ: 2026թ. մարտին պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 6.93%՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.03 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 0.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա մարտի համեմատ դրանց եկամտաբերությունները նվազել են համապատասխանաբար 1.24 և 1.68 տոկոսային կետով:

2026թ. առաջին եռամսյակում պետական բյուջեի՝ ծրագրված պակասուրդի փոխարեն հավելուրդի ձևավորումը (առավելապես ծախսերի, հատկապես կապիտալ ծախսերի զգալի թերակատարման հետևանքով), արտաքին աղբյուրներից ֆինանսավորման չափազանց ցածր մակարդակը,

ինչպես նաև կապիտալ ծրագրերի իրականացման շարունակական խնդիրները վկայում են պետական ֆինանսների կառավարման և բյուջետային ծրագրերի իրականացման ոլորտներում առկա լրջագույն համակարգային թերությունների մասին:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

- 2026թ. առաջին եռամսյակում ՀՀ տնտեսությունում համեմատաբար բարձր տնտեսական ակտիվությունը պահպանվել է, սակայն աճի կառուցվածքը համաչափ և կայուն չէ:

Առևտրի ոլորտի աճի տեմպը շուրջ եռակի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից, որն իր հերթին, արդեն իսկ ավելի քան քառակի դանդաղել էր 2024թ. առաջին եռամսյակի համեմատ: Այսինքն՝ երկու տարի առաջվա համեմատ առևտրի ոլորտի աճի տեմպը դանդաղել է 12.6 անգամ:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ վատթարացել է 4.7%-ով և կազմել 1,185 մլն ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածի 4.2% գնաճի պարագայում ստացվում է, որ իրական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.6%-ով: Իսկ, ինչպես հայտնի է, պաշտոնական վերջին հրապարակման (2024-ի արդյունքների վերաբերյալ) համաձայն՝ Հայաստանում աղքատության մակարդակը 21.7% է, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 0.6%:

- 2026թ. առաջին եռամսյակում պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 668.5 մլրդ դրամ՝ եռամսյակային ճշտված պլանի ցուցանիշից 5.2%-ով ավելի: Ծրագրային ցուցանիշի գերակատարումը հիմնականում ապահովվել է «հարկային եկամուտների» և «այլ եկամուտների հաշվին», մինչդեռ պաշտոնական դրամաշնորհների գծով շարունակվում է արձանագրվել քրոնիկ թերակատարում, ինչը վկայում է դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության և նախապես ստանձնած պարտավորությունների կատարման ոլորտներում թերացումների մասին:

Արձանագրվել է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների զգալի ծավալների կուտակում (դրանց բանկային տեղաբաշխումից ստացվող տոկոսային եկամուտների աճ), որը հիմնականում կարևորագույն ծրագրերի

գծով ծախսերի շարունակական թերակատարման հետևանք է և վկայում է բյուջետային քաղաքականության անարդյունավետության մասին:

- 2026թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի փաստացի ընդհանուր ծախսերը՝ 603.3 մլրդ դրամ, 29.6%-ով կամ 254.2 մլրդ դրամով պակաս են, քան նախատեսված է եռամսյակային ճշտված պլանով: Ծախսերի թերակատարման 46%-ը (116.8 մլրդ դրամ) ընթացիկ ծախսերի, իսկ 54%-ը (137.4 մլրդ դրամ) ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով է: Ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի ֆինանսավորման եռամսյակային ծրագիրը թերակատարվել է 28.7%-ով: Պատկերն ավելի անմխիթար է արտաքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի ֆինանսավորման առումով. այս անգամ ևս (ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում) արտաքին աղբյուրների հաշվին ծախսերի կատարման տեսակարար կշիռը չափազանց ցածր է եղել՝ բյուջեի ծախսերի ընդամենը 0.7%-ը, կամ 4.3 մլրդ դրամն է ֆինանսավորվել արտաքին աղբյուրներից, ինչը եռամսյակային ճշտված պլանի ցուցանիշից շուրջ քառակի ցածր է, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի մեծությունից՝ շուրջ 2.3 անգամ պակաս:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերը՝ 560.9 մլրդ դրամ, ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 17.2%-ով: Այս հաշվետու ժամանակահատվածում ևս դրանց բոլոր բաղադրիչները թերակատարվել են:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էականորեն նվազել են՝ 43.4%, իսկ եռամսյակային ճշտված պլանի նկատմամբ ավելի քան քառակի թերակատարվել են՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ՊՆ կապիտալ ծախսերի թերակատարմամբ: Կապիտալ ծախսերի դեպքում ևս թերակատարումը վերաբերում է ծախսային բոլոր բաղադրիչներին:

Ծախսերի թերակատարման զգալի մասը Պաշտպանության, ԿԳՄՍ ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով է: Կատարողականը (տոկոսային արտահայտությամբ) առավել ցածր է Պաշտպանության, ՏԿԵ և ԿԳՄՍ նախարարությունների պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով՝ համապատասխանաբար 39.9%, 62.7% և 65.6%:

Ծրագրերից շատերի գծով թերակատարումները քրոնիկ են, ինչը նշանակում է, որ գործող կառավարությունը պարզապես ի վիճակի չէ ապահովել մի շարք կարևորագույն ծրագրերի («Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում», «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում», «Զբոսաշրջության զարգացում», «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և այլն) արդյունավետ իրականացումը, այն դեպքում, երբ դրանցով է պայմանավորված գործող կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրով սահմանված թիրախների զգալի մասի ապահովումը:

- ՀՀ պետական բյուջեն 2026թ. առաջին եռամսյակում կատարվել է 65.2 մլրդ դրամ հավելուրդով՝ ծրագրված 221.8 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Այսինքն՝ պետբյուջեի կատարման շեղումը պլանից 287 մլրդ դրամ է: Հավելուրդի ձևավորումը հիմնականում պայմանավորված է ծախսերի զգալի թերակատարումով:

Բյուջեի ցածր կատարողականը սահմանափակում է տնտեսական ակտիվության և ենթակառուցվածքների զարգացման վրա պետական ծրագրերի ազդեցությունը և հանդիսանում է գործող կառավարության ցածր արդյունավետության լավագույն վկայություն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: